Հաստատված է

Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)

Ամբիոնի պետ՝ ..............................

(ստորագրություն)

..................................

(ամիս ամսաթիվ)

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | | ՀՀ սահմանադրական արդարադատություն |
| | | |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ | | 1905/B01 |
| | | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | | Իրավագիտություն, առկա ուսուցում |
| | | |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | Իրավագիտություն |
| | | |
| ԱՄԲԻՈՆ | | Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն<br><br>E-mail: pitambion@mail.ru |
| | | |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | | Ա. Սաֆարյան |

| | | |
|---|---|---|
| | | E-mail: safamalya@mail.ru, հեռ. 093577589 |
| | | |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | | 1-րդ կուրս, 1-ին կիսամյակ |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | | մագիստրատուրա |

| | | |
|---|---|---|
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | | 3(երեք) |
| | | |
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ<br><br>ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ | | «ՀՀ սահմանադրական արդարադատություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 28 դասախոսություն, 4 սեմինար պարապմունք, 58 ժամ ինքնուրույն աշխատանք:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ` 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում առանց եզրափակիչ գնահատման: |
| | | |
| ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| ՀԱՄԱՌՈՏ<br><br>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | | «ՀՀ սահմանադրական արդարադատություն» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են սահմանադրական |

| | | |
|---|---|---|
| | | վերահսկողության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, դատական սահմանադրական վերահսկողության ձևերը, սահմանադրական արդարադատության մարմինների համակարգը, սահմանադրական դատարանի լիազորությունները և գործունեության կարգը, սահմանադրական դատարանի որոշումների բնույթը, սահմանադրական արդարադատության համակարգերի հետագա զարգացման հիմնական խնդիրները և ուղղությունները: |
| | | |
| **ՆՊԱՏԱԿ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ սահմանադրական վերահսկողության հասկացության և ձևերի, սահմանադրական արդարադատության համակարգերի և մարմինների, սահմանադրական դատարանի լիազորությունների, գործունեության կարգի, որոշումների բնույթի և սահմանադրական արդարադատության համակարգի զարգացման միտումների վերաբերյալ: |
| **ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի խնդիրներն են`<br>• Ուսումնասիրել սահմանադրական վերահսկողության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում,<br>• ներկայացնել սահմանադրական վերահսկողության ձևերի առանձնահատկությունները,<br>• ուսումնասիրել սահմանադրական արդարադատությյան մարմինների համակարգը,<br>• ներկայացնել սահմանադրական դատարանի լիազորությունները,<br>• ուսումնասիրել սահմանադրական դատարանի որոշումները: |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** | | |

| | | |
|---|---|---|
| *Կարողանա՝* | | 1. տալ սահմանադրական վերահսկողության հասկացությունը, սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության դերը պետական իշխանության իրականացման գործում,<br>2. տարբերել սահմանադրական արդարադատության խնդիրներն ու նպատակները, օբյեկտները և սուբյեկտները<br>3. ներկայացնել դատական սահմանադրական վերահսկողության ձևերը,<br>4. բացահայտել սահմանադրական արդարադատության մարմինների համակարգը և առանձնահատկությունները,<br>5. բացահայտել սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները դատական համակարգի այլ մարմինների և պետական իշխանության մարմինների հետ,<br>6. սահմանել սահմանադրական դատարանի լիազորությունները,<br>7. ընկալել սահմանադրական վերահսկողության կարևորությունը և նշանակությունը մարդու իրավունքների պահպանման ու պաշտպանության բնագավառում,<br>8. մատնանշել սահմանադրական դատարան դիմելու կարգն ու սահմանադրական դատավարության առանձնահատկությունները,<br>9. ներկայացնել սահմանադրական արդարադատության համակարգերի զարգացման միտումները: |

| | | |
|---|---|---|
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| | | |
| **Հիմնական** | | 1. Գ.Գ. Հարությունյան Սահմանադրական վերահսկողություն ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար.- Հ 422 Եր., «Իրավունք» հրատ., 2008 198 էջ<br>2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. Խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: |

| | | |
|---|---|---|
| | | «Երևանի համալսարան» հրատ., մաս 2 Երևան, 2016:<br>3. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Պ507 Հեղ. խումբ; Գիտ. խմբ` Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.-2 -րդ լրամշակված հրատ.-Եր.:Լուսաբաց հրատարակչատուն, 2016.- 628էջ:<br>4. Մուրադյան Մ.Հ. Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր / Մ.Հ. Մուրադյան. – Եր., Մ992 Ա/Զ Արման Ասմանգուլյան, 2016 (մաս 1) - 224էջ:<br>5. Այվազյան Ն., Այվազյան Ա., Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005: 2002. |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1. Մ. Մուրադյան Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք (Ընդհանուր մաս): Եր. 2011.<br>2. Авакьян С.А. Констутиционное право. Энциклопедический словарь. Изд."Норма", М.,2000.<br>3. Автономов А.С. Констутиционное (государственное) право зарубежных стран. М., 2005.<br>4. Баглай М.Б. Конституционное право Российской Федерации. М., 2005.<br>5. Государственное право Германии /издатели: И. Изензее, П. Кирххов/. В 2-х томах, М., 1994.<br>6. Енгибарян Р.В. Сравнительное конституционное право. М., 2005<br>7. Енгибарян Р.В. Конституционное развитие в современном мире. М., 2007.<br>8. Зиновьев А.В. Конституционное право России: проблемы теории и практики. М., 2000.<br>9. Козлова Е.И.Кутафин О. Е. Констутиционное право России. М., 2006.<br>10. Конституционное /государственное/ право зарубежных стран /под ред. проф. Страшуна Б. А./. В 4-х томах. Том 1, М., 1993, том 2 М., 1995, том 3, М., 1998.<br>11. Маклаков В.В. Констутиционное право зарубежных стран (Общая часть). М., 2006.<br>12. Сравнительное конституционное право /отв. ред. проф. Чиркин В. Е./. М., |
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ** | | ՈՒսումնական 1-ին կիսամյակի համար համար ստուգման ձև է նախատեսված քննությունը: |
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ** | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:<br>Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա |

| | | |
|---|---|---|
| | | «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված» գնահատականների նշանակումով:<br><br>Գնահատականների չափանիշներն են՝<br><br>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, ունակ է կատարելու վերլուծություններ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է մեկնաբանում սահմանադրա-իրավական նորմերը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br><br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.<br><br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները, չի պատասխանում լրացուցիչ հարցերին.<br><br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն և պատասխանել լրացուցիչ հարցերին: |

| | | |
|---|---|---|
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| Ներկայություն | | Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրոմիավոր: |
| Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ<br><br>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| Թեմա 1 |
|---|

| **Սահմանադրական վերահսկողության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում**<br><br>**(6ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.«Սահմանադրան վերահսկողություն» հասկացությունը:<br><br>2.Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության դերը պետական իշխանության իրականացման գործում:<br><br>3. Սահմանադրական արդարադատության խնդիրներն ու նպատակները:<br><br>4.Սահմանադրական վերահսկողության առանձնահատկությունները անցումային փուլում:<br><br>5. Սահմանադրական արդարադատության համակարգերի ձևավորման ու զարգացման պատմական փուլերը:<br><br>6. Սահմանադրական արդարադատության օբյեկտները:<br><br>7. Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական դատավարության սուբյեկտները: | Հարցեր 1-3, 6-7 - անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br><br>Հարցեր 4, 5 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 2**<br><br>**Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը**<br>**(4ժամ դասախոսություն,2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Նախնական վերահսկողություն:<br><br>2.Հետագա վերահսկողություն: | Հարցեր 1-7-անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման |

| | |
|---|---|
| 3.Կոնկրետ վերահսկողություն:<br><br>4.Վերացական վերահսկողություն:<br><br>5.Պարտադիր վերահսկողություն:<br><br>6. Փակուլտատիվ վերահսկողություն:<br><br>7. Ըստ ձևի և ըստ բովանդակության վերահսկողություն:<br><br>8. Դատական սահմանադրական վերահսկողության տարբեր ձևերի գործադրման առանձնահատկությունները տարբեր երկրներում:<br><br>9.Դատական սահմանադրական վերահսկողության տարբեր ձևերի առավելություններն ու թերությունները: | եղանակով:<br>Սովորողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը և ներկայացնում խնդրա-հարույց հարցերը:<br><br>Հարցեր 1- 7 – սեմինար պարապմունք.<br>Խնդրահարույց հարցերի քննարկում:<br><br>Հարց 8, 9 – ինքնուրույն աշխատանք:<br>Սովորողները նախապես ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, ուսումնա-սիրում են Եվրոպական մի քանի երկրների սահմանադրություն-ների կառուցվածքը, կարգավորման ոլորտները, և համեմատում ՀՀ Սահմանադրության հետ ու ցույց տալիս առանձնահատկություն-ները:<br><br>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: |

| **Թեմա 3**<br><br>**Սահմանադրական արդարադատության մարմինների համակարգը**<br>**(6ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգը և դրա առանձնահատկությունները: | Հարցեր 1-6-անցկացվում է դասախոսություն:<br><br>Հարցեր 1-6 - ինքնուրույն |

| | |
|---|---|
| 2. Սահմանադրական արդարադատության եվրոպական համակարգը և դրա առանձնահատկությունները:<br><br>3. Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների կազմավորման առանձնահատկությունները:<br><br>4.Սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները դատական համակարգի այլ մարմինների հետ:<br><br>5. Սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները պետական իշխանության այլ մարմինների:<br><br>6. Սահմանադրական դատարանի անկախության երաշխիքները: | աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:<br><br>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են տեստային առաջադրանքներ: |

| **Թեմա 4**<br><br>**Սահմանադրական դատարանի լիազորությունները և գործունեության կարգը կարգավիճակը**<br>**(4ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Սահմանադրական դատարանի լիազորությունները:<br><br>2. Սահմանադրական վերահսկողությունը մարդու իրավունքների պահովման ու պաշտպանության բնագավառում:<br><br>3. Սահմանադրական դատարան դիմելու կարգն ու առանձնահատկությունները:<br><br>4. Սահմանադրական դատարանի գործունեության կարգն ու դրա առանձնահատկությունները:<br><br>5. Սահմանադրական դատավարության առանձնահատկությունները:<br><br>6. ՀՀ սահմանադրական դատարանի լիազորություններն ու | Հարցեր 1-6-անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում սովորողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br><br>Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք |

| | |
|---|---|
| գործունեության կարգը: | քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: |

**Թեմա 5**

**Սահմանադրական դատարանի որոշումների բնույթը**

**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
|---|---|
| 1. Սահմանադրական դատարանի որոշումները և դրանց իրավական հետևանքները:<br><br>2. Սահմանադրական դատարանի եզրակացությունները և դրանց իրավական հետևանքները:<br><br>3. Սահմանադրական դատարանների կողմից ընդունվող ակտերի և դրանց իրավական հետևանքների առանձնահատկությունները տարբեր երկրներում: | Հարցեր 1-3 - Դասախոսություն՝ սովորողների ակտիվ ներգրավմամբ, խմբա-յին քննարկման ձևով:<br><br>Հարց 3 - ինքնուրույն աշխատանք. Սովորողները ծանոթանում են դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննար-կվում են դասախոսությունների ընթացքում:<br><br>Հարցեր 1-3-անցկացվում է սեմինար պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջա-դրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ: |

**Թեմա 6**

**Սահմանադրական արդարադատության համակարգերի հետագա զարգացման հիմնական խնդիրները և ուղղությունները**

**(2 ժամ դասախոսություն)**

| Թեմայի հարցեր | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
| --- | --- |
| 1.Սահմանադրական արդարադատության համակարգերի զարգացման միտումները:<br><br>2. ՀՀ-ում սահմանադրական արդարադատության համակարգի բնորոշ առանձնահատկությունների ու հետագա զարգացման հիմնական զարգացման ուղղությունները: | Հարցեր 1-2-անցկացվում է դասախոսության խմբային քննարկման եղանակով: Սովորողները նախօրոք ծանոթանում են ներկայացվող իրավունքների վերաբերյալ գրականության և օրենսդրական ակտերին, վեր հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման: |

## Հարցաշար

**(ՀՀ սահմանադրական արդարադատություն առարկայի քննության)**

1. □Սահմանադրական վերահսկողություն□ հասկացությունը: Սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ
2. Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության դերը պետական իշխանության իրականացման գործում
3. Սահմանադրական արդարադատության խնդիրներն ու նպատակները
4. Սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններն անցումային փուլում
5. Սահմանադրական արդարադատության համակարգերի ձևավորման ու զարգացման պատմական փուլերը
6. Սահմանադրական արդարադատության օբյեկտները
7. Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական դատավարության սուբյեկտները
8. Նախնական վերահսկողություն
9. Հետագա վերահսկողություն
10. Կոնկրետ վերահսկողություն
11. Վերացական վերահսկողություն
12. Պարտադիր վերահսկողություն
13. Ֆակուլտատիվ վերահսկողություն
14. Ըստ ձևի և ըստ բովանդակության վերահսկողություն
15. Դատական սահմանադրական վերահսկողության տարբեր ձևերի գործադրման առանձնահատկությունները տարբեր երկրներում
16. Դատական սահմանադրական վերահսկողության տարբեր ձևերի առավելություններն ու թերությունները

17. Սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգը և դրա առանձնահատկությունները
18. Սահմանդրական արդարադատության եվրոպական համակարգը և դրա առանձնահատկությունները
19. Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների կազմավորման առանձնահատկությունները
20. Սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները դատական համակարգի այլ մարմինների հետ
21. Սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները պետական իշխանության այլ մարմինների հետ
22. Սահմանադրական դատարանի անկախության երաշխիքները
23. Սահմանադրական դատարանի լիազորությունները
24. Սահմանադրական վերահսկողությունը մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության բնագավառում
25. Սահմանադրական դատարան դիմելու կարգն ու առանձնահատկությունները
26. Սահմանադրական դատարանի գործունեության կարգն ու դրա առանձնահատկությունները
27. Սահմանադրական դատավարության առանձնահատկությունները
28. ՀՀ սահմանադրական դատարանի լիազորություններն ու գործունեության կարգը
29. Սահմանադրական դատարանի որոշումները և դրանց իրավական հետևանքները
30. Սահմանադրական դատարանի եզրակացությունները և դրանց իրավական հետևանքները

31. Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող ակտերի և դրանց իրավական հետևանքների առանձնահատկությունները տարբեր երկրներում
32. Սահմանադրական արդարադատության համակարգերի զարգացման միտումները
33. ՀՀ-ում սահմանադրական արդարադատության համակարգի բնորոշ առանձնահատկություններն ու հետագա զարգացման հիմնական ուղղությունները
34. Սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային համագործակցությունը